ArmLur.am

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

I SSN 1829-2763

18 նոյեմբերի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

166
(2646)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 137



2022 թվականի հունիսի 27-ին Նիկոլ Փաշինյանը առցանց ասուլիս է ունեցել եւ կրկին անդրադառնալով ղարաբաղյան հակամարտության կարգավորման թեմային՝ արել մանիպուլատիվ հայտարարություններ: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է դրանցից մեկը: Նա պատասխանել է 1 տարվա ընթացքում 4 ընկերություններում իր եղբոր՝ տնօրեն նշանակվելու մասին հարցին եւ հանդես եկել մանիպուլատիվ հայտարարությամբ՝ նշելով, որ իր եղբայրն ընդամենը ընկերությունների խմբի տնօրեն է եւ ոչ ավելին: «Տեսեք՝ ինչ ահասարսուռ է հնչում՝ 4 ընկերության տնօրեն: Իրականում 1 ընկերությունների խմբում աշխատում է տնօրեն: Ես կարող եմ սեփական օրինակով ասել՝ երբ ժամանակին զբաղվում էի լրատվամիջոցի գործերով, կար թերթ, կար տպարան, մի քանի ՍՊԸ, եւ էդ ՍՊԸ-ների տնօրենը մի մարդ էր, որովհետեւ դա, ըստ էության, ընկերությունների խումբ է, որն իրար հետ փոխկապակցված գործում է, եւ նման դեպքերում նախընտրելի է ունենալ մեկ տնօրեն. մեկ տնտեսական օրգանիզմի մասին է խոսքը»,- պատասխանել է նա: Այս հայտարարությունից շաբաթներ առաջ «Փաստերի ստուգման հարթակ»-ը պարզել էր, որ, նախորդ տարվա ապրիլ ամսից սկսած, Նիկոլ Փաշինյանի եղբայրը դարձել է մի շարք ընկերությունների տնօրեն: Համաձայն այդ տվյալների՝«Գոու Թրեյդ» ընկերությունը զբաղվում է գյուղատնտեսական մեքենաների եւ սարքավորումների վարձույթով եւ լիզինգով, «Մինա-Մայա» եւ «Արգիշտի-2» ՍՊԸ-ները՝ էլեկտրաէներգիայի արտադրությամբ, իսկ «Միթ Ագրո» ընկերությունը՝մսի առեւտրով: Այս ընկերություններից միայն երկուսն են իրենց գործունեության տեսակով միմյանց հետ փոխկապակցված (էլեկտրաէներգիայի արտադրությամբ զբաղվող «Մինա-Մայա» եւ «Արգիշտի-2» ընկերությունները): Ստացվում է՝ Փաշինյանը հերթական անգամ ստել եւ մանիպուլացրել է իր եղբոր գործունեության մասին հայտնի դարձած տվյալները պարզաբանելիս:



«2020-ի դաժան պատերազմից հետո ես ՀՀ կառավարությանը շարունակ նամակներ եմ հասցեագրել եւ պահանջել ձեւավորել գերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով հանձնաժողով: Ինչու՝ որովհետեւ անհրաժեշտություն կար, որպեսզի կոնկրետ մի մարմին զբաղվի գերիների եւ անհետ կորածների հարցով, այլ ոչ թե մե՛րթ ՊՆ-ն, մե՛րթ ԱԳՆ-ն, մե՛րթ ԱԱԾ-ն... Վերջին նամակը գրել եմ այս տարվա հոկտեմբերին, երբ հանդիպեցի Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հայաստանյան գրասենյակի ղեկավարի հետ: Ի պատասխան՝ վերջապես հայտնեցին կառավարությունից, որ պատերազմից 2 տարի անց ստեղծվել է այդ հանձնաժողովը»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը: Հանձնաժողովի նախագահը ՀՀ ԱԱԾ տնօրենն է, որը նախօրեին հրավիրել է առաջին նիստը: Փաստենք, որ 44-օրյա պատերազմից ավելի քան երկու տարի անց նման հանձնաժողովի ստեղծումը անչափ ուշացած էր, հատկապես որ, ինչպես «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Թագուհի Թովմասյանը, այս տարվա հունվար ամսից ադրբեջանական կողմն արգելել է Արցախի՝իր վերահսկողության տակ անցած տարածքներում որոնողական աշխատանքներ իրականացնել: Հավելենք նաեւ, որ, մեր տեղեկություններով, սեպտեմբերի 13-ի մեկօրյա պատերազմից հետո՝ առ այսօր, մոտ մեկ տանյակից ավելի անթաղ մարմին էլ կա:



ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը մոռացել է աղմկահարույց քրեական գործերը եւ ընկել է «մանր-մունր ձկների» հետեւից: Ուսումնասիրելով Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքը՝«Ժողովուրդ» օրաթերթը նկատում է, որ կոմիտեն ընկել է ցածր կալիբրի չինովնիկների հետեւից՝ գերեզմանատան վարիչ, Կադաստրի կոմիտեի պաշտոնյա, Երեւանի քաղաքապետարանի Կենտրոն վարչական շրջանի պաշտոնատար անձ եւ այլն: Իսկ ո՞ւր մնացին «խոշոր ձկները», ինչո՞ւ է նախաքննական մարմինը լռում: Ի՞նչ փուլում է գտնվում «Մարտի 1»-ի գործը, ինչո՞ւ է հակակոռուպցիոն կոմիտեն լռում «Մարտի 1»-ի գործով մեղադրյալ Գեղամ Պետրոսյանի մասով (որին մեղադրում էր քաղաքացուն սպանելու համար), ի՞նչ եղավ ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի կալանքի տակ գտնվող առանձնատան վաճառքի գործը: Ի վերջո, որտե՞ղ են նախկին թալանչիները՝ ԱԺ նախկին պատգամավոր Արամ Հարությունյանը՝ Բուլկի Արամը, ԴԱՀԿ նախկին պետ Միհրան Պողոսյանը՝Քեթրինի Միհրանը, եւ այսպես շարունակ: Ասել է թե՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը ընկել է «մանր ձկների» հետեւից՝ ցույց տալու համար, թե նորաստեղծ կոմիտեն կոռուպցիայի դեմ է պայքարում, մինչդեռ «խոշոր ձկները» իրենց համար լող են տալիս: Այսպես, ազատ աշխատում է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Բագրատ Բադալյանը, որը, լինելով պաշտոնյա, 500 մլն դոլարով ԱՄՆ-ում տուն է գնել, աշխատում են պաշտոնյաներ, պատգամավորներ, որոնք 100 դրամով երթուղայինով էին երթեւեկում մինչեւ 2018 թվականը, իսկ հիմա մեքենայի ու տան կամ տների տեր են դարձել... Բա կոռուպցիան հո պոզ ու պոչով մեծ կենդանի չէ՛...



Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները երեկ՝նոյեմբերի 16-ին, հերթական «վոյաժների» են մեկնել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԱԺ պաշտպանության ու անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանն ու պատգամավոր Վահագն Ալեքսանյանն Իսպանիա՝ Մադրիդ են մեկնել, որտեղ մասնակցելու են ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի տարեկան նստաշրջանի աշխատանքներին: Նույն գործուղման շրջանակներում Մադրիդ է գործուղվել նաեւ «Հայաստան» խմբակցության պատգամավոր, հանձնաժողովի անդամ Աննա Գրիգորյանը, բայց, ի տարբերություն ՔՊ-ականների, Գրիգորյանը Մադրիդ վաղը՝ նոյեմբերի 18-ին է մեկնելու: Եթե թե՛ Գրիգորյանը, թե՛ Քոչարյանն ու Ալեքսանյանը նույն նիստերին են մասնակցելու, ապա տրամաբանական հարց է առաջանում՝ ինչու են տարբեր օրերի Մադրիդ մեկնում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՆԱՏՕ-ի վեհաժողովում պատգամավորների մասնակցությամբ աշխատանքները նոյեմբերի 19-ից են մեկնարկելու, մինչեւ այդ զուտ կազմակերպչական աշխատանքներ են մեկնարկելու, ինչի ժամանակ պատգամավորները պարզապես որեւէ անելիք չունեն: Ի՞նչ է ստացվում. ՔՊ-ականները մի քանի օր առաջ Մադրիդ են մեկնել պարզապես շրջագայելու ու «աշխարհ տեսնելու» համար՝ ստանալով այդ շրջագայության համար օրապահիկ, եւ դա արել են պետության հաշվին, քանի որ, ըստ ԱԺ կայքում տեղադրված՝ նախագահ Ալեն Սիմոնյանի կարգադրության, գործուղման հետ կապված բոլոր ծախսերը ՀՀ պետբյուջեն է հոգալու:

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»

# ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՄԻԱՆԳԱՄԻՑ ՉԻ ԼԻՆԵԼՈՒ

**«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն է Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վիգեն Խաչատրյանը:**



**-Պարոն Խաչատրյան, ընդդիմադիր Ձեր գործընկերները արդեն վերադարձել են խորհրդարանական դահլիճ. նրանք պնդում են, որ երբեք էլ չէին հեռացել: Իշխանությունը ինչպե՞ս է ընդունում նրանց վերադարձը:**

-Ոչ թե պատրաստ ենք, այլ պարտավոր ենք ականջալուր լինել բոլորի քննադատությանը. դա կլինի քաղաքացու, պատգամավորի կամ մեկ այլ անձի կողմից: Քննադատությունը լսելն ու դրանից հետեւություններ անելը, դրանց հետ համաձայնելը կամ առարկելը մեր պարտականությունն է:

**-Ընդդիմադիր ձեր գործընկերներն ասում են, թե Հայաստանի եւ Արցախի շուրջը օղակը սեղմվում է, դրա համար են վերադարձել խորհրդարան: Ըստ Ձեզ՝ դա՞ է իրական պատճառը:**

-Խորհրդարան գործուղված պատգամավորի կողմից Ազգային ժողովում աշխատելու համար արված ցանկացած արդարացում անհեթեթություն է: Ընտրողը, իր քվեն կոնկրետ ուժի տալով, նրա ներկայացուցիչներին գործուղում է խորհրդարան ու լիազորում աշխատել, հարցեր բարձրացնել, լուծումներ գտնել, օրենսդրական փաթեթներ մշակել եւ այլն: Օրենսդիր մարմնում պատգամավորը երեք ուղղությամբ է աշխատում: Առաջինը՝ գործադիր իշխանության վերահսկողությունն է, երկրորդը՝ օրենսդրական գործունեությունն է (այսինքն, երբ օրենքներ է մշակում, ներկայացնում), երրորդը՝ ներկայացուցչական առաքելությունը (այսինքն՝ անմիջական կապը հանրության հետ, երբ բարձրաձայնում է նրանց հուզող բոլոր հարցերը): Այս ամենն է հենց պատգամավորի աշխատանքը, ու որեւէ մեկը չպետք է հիմնավորի, թե ինչու է անում այդ ամենը: Շեշտում եմ՝ իր աշխատանքն է պարտավորեցնում աշխատել վերոնշյալ ուղղություններով: Խնդիրն այն է, որ մարդիկ չեն գիտակցում դրա կարեւորությունը եւ կարծում են, որ եթե ընտրվել են, ապա պետք է կամ կարող են կամակորի պես պահել իրենց, ինչը, բնականաբար, լուրջ մարդուն վայել չէ:

**-Այսինքն՝ ընդդիմադիրները կամակորությա՞մբ են զբաղվել մինչեւ այս պահը:**

-Կարծում եմ՝ իմ խնդիրը չէ գնահատել ընտրված պատգամավորին, քանի որ նրանք ունեն ընտրողներ, որ իրենց կողմից խորհրդարան գործուղվածների աշխատանքը տեսնում են, հետեւություններ են անում եւ գնահատական են տալիս այդ ամենին: Իսկ թե ինչպիսին է գնահատականը, դա կերեւա մի քանի տարի անց՝ հաջորդ ընտրությունների ժամանակ:

**-Պարոն Խաչատրյան, հասարակությունը «խաղաղության պայմանագրի» մասին որպես չստորագրված, սակայն արդեն իրողություն դարձած երեւույթի մասին է խոսում: Բոլորը խոսում, քննարկում, արտահայտվում են այդ մասին: Իսկ վերջերս էլ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասաց, որ որեւէ երաշխիք չկա, որ պայմանագիրը կկնքվի եւ հակառակորդը նոր ագրեսիայի չի դիմի: Ի վերջո ի՞նչ սպասել այդ պայմանագրից:**

-Խոսքը «խաղաղության դարաշրջանի» մասին է, ինչի մի մաս կարող է կազմել «խաղաղության պայմանագիրը», ու մենք ունենանք մի փաստաթուղթ, որով կողմերը կպարտավորովեն չխոսել ուժի դիրքերից եւ կխուսափեն առկա խնդիրները ուժի գործադրմամբ լուծելուց: Ու որպեսզի նման բան տեղի չունենա, մենք մեր մասով ամեն ինչ կանենք: Բայց, սովորաբար, հակամարտող պետությունների միջեւ որեւէ փաստաթուղթ կնքվում է, երբ կողմերը որոշակի փոխզիջումների շուրջ համաձայնություն են ձեռք բերում: Եթե մաթեմատիկական լեզվով ասենք, ապա «խաղաղության պայմագիրն» անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Իհարկե, կարող է «խաղաղության պայմանագիր» կնքվել ու դրանից օրեր անց պատերազմ սկսվի. պատմությունն այդպիսի դեպքեր էլ է ճանաչում: «Խաղաղության պայմանագիր» կնքելու ու իրական խաղաղության հասնելու բավարար պայմանները մեր հզորությունը, մեր բանակի հակահարված տալու կարողությունն ու հասարակության համախմբվածությունն են: Մտածել, թե «խաղաղության պայմանգիր» կկնքենք եւ հաջորդ օրվանից խաղաղ կյանքով կապրենք, միամտություն է: Այդպես պարզապես չի լինում:

*Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ*

ԲԱՆԱԿ

# ԳՐԱՎԻՉ ԱՌԱՋԱՐԿ՝ ԺԱՄԿԵՏԱՅԻՆՆԵՐԻՆ

**Պաշտպանության նախարարությունը ժամկետային զինծառայողների համար նոր օրինագիծ է մշակում, ինչը նախատեսում է, որ 18-ամյա ժամկետային զինծառայողները բանակ զորակոչվելուց վեց ամիս անց կարող են պայմանագրային հիմունքներով ծառայության անցնել:**

Այսինքն՝ ժամկետային զինծառայողը կարող է պաշտպանության նախարարության հետ պայմանագիր կնքել ու ծառայության մնացած հատվածն արդեն որպես պայմանագրային զինվորական անցկացնել:

Ազգային ժողովի պաշտպանության ու անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Արմեն Խաչատրյանն է բացատրում՝ զինվորը կարող է և՛ ծառայել, և՛ աշխատել զինված ուժերում, դրա համար բարձր աշխատավարձ ստանալ՝ առնվազն 315 հազար դրամ: Պաշտպանական գերատեսչության կողմից մշակված ու «Պաշտպան հայրենյաց» անունը ստացած ծրագիրն, անխոս, առաջին հայացքից կարող է գրավիչ թվալ, բայց պետությունը 18-ամյա երիտասարդին ինչպե՞ս է համոզելու իր հետ 5 տարվա պայմանագիր կնքել:

«Երկու տարի շարքային զինծառայող լինելու փոխարեն, - ընդգծում է Խաչատրյանը, - պետությունն առաջարկում է 6 ամիս պատրաստություն անցնել ուսումնական զորամասում, դառնալ պայմանագրային զինծառայող, անցնել ատեստացիայի գործընթաց ու առնավազն 315 հազար դրամ եւ ավելի բարձր աշխատավարձ ստանալ: Իսկ պայմանագրի ավարտից հետո՝այսինքն 5 տարի անց, զինծառայողն առձեռն 5 մլն պատվովճար կստանա»:

Ըստ Խաչատրյանի՝ այս ծրագիրը բանակի նկատմամբ ունեցած գրավչությունը կբարձրացնի, պայմանագրային զինծառայողներն էլ պրոֆեսիոնալ զինվորականներ կդառնան:

Նախաձեռնության ամենակարեւոր հանգամանքն այն է, որ պայմանագրային զինծառայողների տարիքային միջին շեմը կնվազի՝ ներկա՝ ընդհուպ 50 կամ 60 տարիքային խմբից դառնալով 18- 25 տարեկան: «Իհարկե, - շեշտում է ՔՊ-ական պատգամավորը, - լավ օրից չէ, որ զինված ուժերում պայմանագրայինների տարիքը միջինից բարձր է, բայց ծրագրի կյանքի կոչվելուց հետո բանակի պայմանագրային զինծառայողների թեւը երիտասարդանալու է», - վստահեցնում է նա:

Ըստ Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանի՝ ծրագիրը սինթեզ է մինչեւ այս պահը բանակում գործող տարբեր ծրագրերի, ինչի արդյունավետությունը կարեւոր մի քանի հանգամանքներից է կախված: Առաջինը՝ զինված ուժերի բարոյահոգեբանական մթնոլորտն է, ինչը մեծ ազդեցություն ունի երիտասարդներին դեպի զինված ուժեր բերելու հարցում, երկրորդը՝ պետություն-զինծառայող փոխհարաբերություններն են ու մասնավորապես այն, թե կառավարությունն ինչքանով է աջակցում զինվորին ու կանգնում նրա կողքին:

Աբրահամյանը չի նկատում օրվա իշխանության՝ զինուժը երիտասարդների համար իսկապես գրավիչ դարձնելու կամքը: «Որպես նախագիծ, - ասում է, - «Պաշտպան հայրենյացը» կարելի է գնահատել, դրա դրական առանձնահատկություններն առանձնացնել, բայց հարցն այն է, թե ով է դրա իրագործողը»:

*ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ*

## ՍԱ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ Է

Արմեն Աշոտյանին երեկ առավոտյան արգելվել է մեկնել երկրից՝ մասնակցելու Լիսաբոնում կայանալիք ԵԺԿ Քաղաքական համաժողովին: Այս մասին հայտարարություն է տարածել ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Սա անթույլատրելի է՝ հաշվի առնելով այն պարզ իրողությունը, որ Աշոտյանը որեւէ գործում որպես մեղադրյալ ներգրավված չի եղել:

Այսինքն՝նրա նկատմամբ կիրառվել է մոտեցում, որը կամայականության լրջագույն կասկածներ է հարուցում:

Գրություն եմ պատրաստում ՀՀ գլխավոր դատախազին՝ պահանջելով համապատասխան պարզաբանումներ ՀՀ քաղաքացի Արմեն Աշոտյանի իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

Հիշեցնեմ՝ ՀՀ Սահմանադրությամբ է սահմանված, որ յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու իրավունք: Իսկ քաղաքական հրահանգով զանգվածի արդարադատություն իրականացնելը մարդու իրավունքների աղաղակող խախտում է, որը խիստ դատապարտելի է»:

## ԸՆՏՐՎԱԾ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Պետությունն ընտրված վերաբերմունքով է առաջնորդվում պաշտոնյաներին կամ նրանց ընտանիքի անդամներին պատկանող գույքի ձեռք բերման օրինականությունը ստուգելու կամ մութ անկյունները բացահայտելու հարցում: Այս օրերին, երբ բոլորի ուշադրությունը Խաչատուր Սուքիասյանին պատկանող «Սիլ Պլազայի» շենքն ու դրա ձեռք բերման պատմությունն է, ոչ պակաս աղմկահարույց այլ գործարքներ պարզապես ստվերվել են, կամ էլ, պարզապես, քաղաքական իշխանությունը դրանց հետեւից գնալու քաղաքական կամք ու ցանկություն չունի: «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկացավ, որ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի մորը՝ Գերագույն խորհրդի նախկին պատգամավոր Մարգուշ Վարդանյանին նախկինում պատկանած անշարժ գույքի մասով դատախազությունում երբեք ուսումնասիրություն չի եղել: Խոսքը Երեւանի Պուշկին փողոցում գտնվող «Վիգմոր» կլինիկայի շենքի մասին է, որն, ըստ Ավանեսյանի պնդումների, այժմ իրենց չի պատկանում: Շենքը, նշենք, պատկանել է «Արմֆարմացիա» ընկերությանը, որտեղ, նախարարի վստահեցմամբ, մասնաբաժին նաեւ իր մայրն ունի: «Արմֆարմացիա» ընկերությունը նախկինում ակտիվորեն գործել ու շենք է ձեռք բերել զուտ միայն այն պատճառով, որ Ավանեսյանի մայրը ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ տիկին Լյուդմիլայի մտերիմ ընկերուհին է: Եթե անգամ ընդունենք հանգամանքը, որ «Արմֆարմացիային» պատկանող շենքն այլեւս որեւէ կապ չունի Ավանեսյանի ընտանիքի հետ, ապա պատկան մարմինները, զուտ միայն արդարության ու ներքին բարոյականության սկզբունքից ելնելով, պարտավոր են նաեւ այս գործին ու պատմությանը հետամուտ լինել, պարզել՝ Գխ նախկին պատգամավորը, նախկին նախագահի տիկնոջ ընկերուհին ինչպես է տարիներ առաջ շենք ձեռք բերել. արդյոք վաճառքը արհեստական գործարք չէ՞:

## ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Արցախի ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Միքայել Արզումանյանի դեմ հարուցված քրեական վարույթով հարցաքննվել է ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը: Մենք փորձեցինք անձամբ նրանից պարզել իրականությունը, սակայն մեր փորձերն անցան ապարդյուն: Նշենք, որ Միքայել Արզումանյանի գործով առերեսումների գործընթացը շարունակվում է: Նախաքննական մարմինը Արցախի պաշտպանական բանակի հրամանատարների եւ այլ անձանց է հրավիրում հարցաքննության, առերեսում ՊԲ նախկին հրամանատարի հետ: Նկատենք, որ սովորաբար առերեսումներ են իրականացվում այն ժամանակ, երբ քրեական վարույթով հակասություններ են առաջանում գործով անցնող անձանց ցուցմունքներում: Դա է պատճառը, որ քննիչը Միքայել Արզումանյանին եւ գործով անցնող այլ անձանց նստեցրել է դեմ-դիմաց եւ կոնկրետ հարցադրումներ արել:

Նկատենք, որ Արզումանյանը կալանավորվել էր սեպտեմբերի 1-ին եւ մինչ օրս գտնվում է կալանքի տակ:

Ի դեպ, գրել էինք, որ մինչեւ նրան մեղադրանք առաջադրելը վկայի կարգավիճակով հարցաքննվել են նաեւ ԱԺ պատգամավոր, «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը, Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Սեյրան Օհանյանը հաստատել էր տեղեկությունը:

Միքայել Արզումանյանին մեղադրանք է առաջադրվել Շուշի քաղաքի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում պաշտոնեական անփութություն կատարելու համար:

## ՏԵՂԱՓՈԽԵԼ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Գլխավոր շտաբի պետի տեղակալ Ստեփան Գալստյանի վիճակը Երեւանի Կենտրոն քրեակատարողական հիմնարկում կամ բոլորին հայտնի՝ ԿԳԲ «պադվալում» վատացել է, եւ նրան տեղափոխել են «Էրեբունի» բժշկական կենտրոն: Ավելին՝ նա այնքան վատ վիճակում է եղել, որ երեկ անգամ ի վիճակի չի եղել գնալ Հակակոռուպցիոն դատարան եւ մասնակցել նիստի:

Հիշեցնենք, որ Գալստյանը կալանավորվել է ՀՀ ԶՈՒ կարիքների համար ռազմամթերքի մատակարարման գործընթացում չարաշահումներ եւ առանձնապես խոշոր չափերով հափշտակություններ կատարելու դեպքերի առթիվ քննվող քրեական գործով:

Նա մեղադրվում է նյութական ծանր հետեւանքներ առաջացնող պաշտոնեական դիրքի չարաշահման եւ պաշտոնեական կեղծիք կատարելու մեջ:

Հիշեցնենք նաեւ, որ այս գործով կալանքի տակ են ԱԱԾ-ն, ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, գլխավոր շտաբի պետի տեղակալ Ստեփան Գալստյանը, ռազմական ավիացիայի նախկին պետ Ավետիք Մուրադյանը: Իսկ ահա զենքի մատակարար Դավիթ Գալստյանը (Պատրոն Դավիթը) ազատության մեջ է:

Հավելենք, որ Ստեփան Գալստյանն իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ուկրաինահայ մի խումբ գործարարների:**



Ողջունելով ներկաներին՝ վարչապետը հույս է հայտնել, որ քննարկման արդյունքում գործարարների ներկայությունը Հայաստանի Հանրապետությունում ավելի գործնական կդառնա: «Տեղյակ եք երեւի, որ, բարեբախտաբար, այս տարի Հայաստանում աննախադեպ բարձր տնտեսական արդյունքներ են արձանագրվել, բայց դա չի նշանակում, որ խնդիրներ չունենք: Մեր տնտեսական բնույթի խնդիրներից կարեւորագույնն այն է, ինչ մասին մենք մի քանի անգամ խոսել ենք: Այսօր, ցավոք, կապիտալ ծախսերի մեր ծրագրերը չենք կարողանում լիարժեք իրականացնել մի պարզ պատճառով՝ Հայաստանում մասնավոր հատվածի կարողություններն այնքան զարգացած չեն, որպեսզի նրանք կարողանան, այսպես ասած, իրացնել այն ամբողջ պոտենցիալը, որ մենք առաջարկում ենք: Խոսքը ճանապարհների, դպրոցների, մանկապարտեզների, պետական նշանակության այլ օբյեկտների կառուցման մասին է, եւ ես կուզեի ձեր ուշադրությունը հրավիրել այս փաստի վրա:

Հաջորդը՝ կարծում եմ, որ իհարկե շատ բարդ աշխարհիքաղաքական եւ միջազգային վիճակում ենք գտնվում, ամբողջ աշխարհը, եւ ինչպես տեսնում ենք, այդտեղ ունենք սպառնալիքներ, մարտահրավերներ, բայց մյուս կողմից նաեւ ունենք հնարավորություններ, այդ թվում՝ ներդրումային: Կցանկանայի ձեր ուշադրությունը հրավիրել այդ հանգամանքի վրա: Իսկ թե որ ուղղություններն են ավելի հեռանկարային եւ հետաքրքիր ձեզ համար, թերեւս դուք ավելի լավ կարող եք որոշել:

Միայն մի արձանագրում կարող եմ անել, ինչի մասին թերեւս լսել եք, որ Հայաստանի Հանրապետությունն ընդամենը երկու ամիս առաջ հրապարակված «Տնտեսական ազատության համաշխարհային ինդեքսում» 11-րդ հորիզոնականն է զբաղեցնում աշխարհում, ինչը նշանակում է, որ աշխարհի 165 երկրների շարքում ներդրումային եւ տնտեսական գործունեության ազատության առումով Հայաստանը 11-րդ հորիզոնականում է: Սա ի՞նչ է նշանակում. սա նշանակում է, որ Հայաստանում տնտեսական գործունեության որեւէ արգելք եւ սահմանափակում չկա, սա նշանակում է, որ որեւէ մեկին արգելված չէ որեւէ բան արտահանել կամ ներմուծել, եւ իհարկե, արգելքները կամ սահմանափակումները վերաբերվում են միայն նրան, ինչ վերաբերվում է բոլորին: Նկատի ունեմ՝ օրենսդրական որոշակի կարգավորումներ եւ այդպես շարունակ: Իհարկե, Հայաստանի պարագայում կան նաեւ լոգիստիկ որոշակի բարդություններ, բայց դժվարությունների հետ առերեսվում են բոլորը, եւ այստեղ այլընտրանքային մոտեցում ընդհանրապես չկա»,- ասել է Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետը տեղեկացրել է, որ էկոնոմիկայի նախարարության ներքո գործում է ներդրումների աջակցման կենտրոնը, որի հիմնական խնդիրն է՝ Հայաստանում ներդրումային հետաքրքրություն ցուցաբերող գործարարներին, տնտեսվարողներին աջակցություն ցուցաբերել: «Եվ մենք պատրաստ ենք լսել նաեւ ձեր կարծիքները, տպավորությունները, գուցե նաեւ ինչ-որ խոչընդոտների կամ դժվարությունների մասին, որոնց հետ առերեսվել եք Հայաստանում: Հետաքրքիր կլինի իհարկե իմանալ այդպիսի դեպքերի մասին, եւ բոլոր այն դեպքերում, երբ կտեսնենք, որ լուծումներ հնարավոր են՝ լուծումներ կտանք: Կարող են լինել նաեւ օբյեկտիվ դժվարություններ, որոնց լուծումն իրատեսական չէ, բայց ամեն դեպքում ամբողջական տեղեկատվություն ունենալը մեզ համար շատ կարեւոր է հետագա գործունեությունը հաշվի առնելու համար»,- ասել է Նիկոլ Փաշինյանը:

Այնուհետեւ վարչապետը եւ հանդիպմանը մասնակից կառավարության մյուս անդամները պատասխանել են գործարարներին հետաքրքրող բազմաթիվ հարցերի, որոնք վերաբերել են բիզնեսի համար բարենպաստ միջավայրի ստեղծման ուղղությամբ իրականացվող բարեփոխումներին եւ այլն:

Վարչապետը պատասխանատու գերատեսչությունների ղեկավարներին հանձնարարել է գործարարների հետ լինել մշտական կապի մեջ եւ կառավարության գործիքակազմերի շրջանակում օժանդակություն ցուցաբերել ծրագրերի արդյունավետ իրականացման գործում:

ՕՐՎԱ ԽԾԱՆԿԱՐ

## ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հյուրընկալել է Շվեյցարիայի Համադաշնության նախկին նախագահ Միշելին Կալմի-Ռեհիյին:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել Հարավային Կովկասում տեղի ունեցող գործընթացների շուրջ:

Վարչապետն անդրադարձել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին, հայ-ադրբեջանական, ինչպես նաեւ՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հետ կապված հայկական կողմի դիրքորոշումներին:

Կարեւորվել է տարածաշրջանում կայունության եւ անվտանգության ամրապնդման ուղղությամբ հետեւողական քայլերի իրականացումը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը նոյեմբերի 17-ին ընդունել է ԱՄՆ ԶՈՒ եվրոպական հրամանատարության պլանավորման, քաղաքականության, ռազմավարության եւ կարողությունների հարցերով տնօրեն, գեներալ-մայոր Դանիել Լասիկայի գլխավորած պատվիրակությանը:

Այս մասին հայտնում են ՀՀ Պաշտպանության նախարարությունից՝ նշելով, որ քննարկվել են պաշտպանական ոլորտում երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր:

## ԲԱՐՈՅԱՊԵՍ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է

ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Բոբ Մենենդեսը շեշտել է, որ ԱՄՆ-ի աջակցությունն Ադրբեջանին աններելի է եւ բարոյապես անընդունելի: Սենատորն այս մասին ընդգծել է հանձնաժողովում լսումների ժամանակ՝ ելույթ ունենալով ԱՄՆ պետքարտուղարի՝ Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով օգնականի եւ ԱՄՆ պետքարտուղարի՝ կովկասյան բանակցությունների գծով ավագ խորհրդականի առաջ:

Սենատորը նախ ընդգծել է, որ տարածաշրջանը խորը աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող հնագույն խաչմերուկ է՝ որպես կամուրջ Արեւմուտքի եւ Ասիայի սրտի միջեւ: Սակայն շատ հաճախ կայսերական նկրտումներ ունեցող բռնապետերը Հարավային Կովկասում ապրողներին զոհ են դարձնում՝ որպես օրինակ նշելով Թուրքիայի կողմից աջակցություն ստացող ադրբեջանական ագրեսիան հայերի դեմ: Նա հիշեցրել է, որ 2020 թվականին Ադրբեջանի սանձազերծած պատերազմը մոտ հարյուր հազար հայերի ստիպել է լքել Լեռնային Ղարաբաղում իրենց տները: Սենատորը խոսել է նաեւ էթնիկ զտումների սպառնալիքների մասին:

Ըստ նրա՝ ԱՄՆ-ի մարդասիրական արձագանքը բավարար չի եղել, ահա, թե ինչու ինքն ավելի շատ առաջ է քաշել մարդասիրական օգնության հարցը՝ օգնելու տուժածներին ինչպես Հայաստանում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

# ԿԱՇԱՌՔ ՎԵՐՑՐԱԾ ՊՆ ՊԱՇՏՈՆՅԱՆ

**ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից կաշառքի գործով ձերբակալված ՊՆ պաշտոնյան Շիրակի մարզի զորամասի հրամանատար Վահե Ավագյանն է:**



Հիշեցնենք, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով հիմնավորվել է, որ Վ. Ա.-ն, զբաղեցնելով ՀՀ պաշտպանության նախարարության N զորամասի հրամանատարի պաշտոնը, իր ծառայողական լիազորություններն օգտագործելով կաշառք տվող անձանց օգտին գործողություններ կատարելու համար, Վ. Ս.-ի միջոցով ստացել է խոշոր չափի կաշառք:

Մասնավորապես՝ նախաքննությամբ պարզվել է, որ ՀՀ ՊՆ N զորամասի համապատասխան ծառայության պետ Վ. Ս.-ն, նույն զորամասի դասակի հրամանատար Տ. Չ.-ից տեղեկանալով այլ պաշտոնի նշանակվելու վերջինիս ցանկության մասին, պատրաստակամություն է հայտնել օժանդակել այդ նպատակով նրա կողմից վերադաս պաշտոնատար անձին 734.040 ՀՀ դրամին համարժեք 1500 ԱՄՆ դոլար կաշառք տալուն: Վ. Ս.-ն այդ մասին տեղեկացրել է նույն զորամասի հրամանատար, իր մտերիմ Վ. Ա.-ին, ով իր հերթին համաձայնել է կաշառքի դիմաց միջնորդել իր վերադասին՝ Տ. Չ.-ին, ծառայության մեջ առաջխաղացման կարգով բարձր պաշտոնի նշանակելու:

Համաձայն նախապես ձեռք բերած պայմանավորվածության՝ 2022 թ. մարտի 12-ին Տ. Չ.-ն Վ. Ս.-ին է փոխանցել 1500 ԱՄՆ դոլար կաշառքի գումարը, ով իր հերթին այն փոխանցել է Վ. Ա.-ին:

Արդյունքում՝ Տ. Չ.-ն 2022 թ. մարտի 22-ին զեկուցագիր է ներկայացրել Վ. Ա.-ին՝ խնդրելով միջնորդել վերադասին՝ իրեն նշանակել հիշյալ զորամասի համապատասխան ստորաբաժանման պետի պաշտոնում, որից հետո Վ. Ա.-ն, ստացած կաշառքի դիմաց իր ծառայողական լիազորություններն օգտագործելով Տ. Չ.-ի օգտին, միջնորդություն է ներկայացրել իր վերադասին, եւ Տ. Չ.-ն նշանակվել է հիշյալ պաշտոնին:

Բացի այդ, Վ. Ս.-ն, մտերիմ փոխհարաբերությունների մեջ գտնվելով նույն զորամասի գումարտակի հրամանատարի տեղակալ-շտաբի պետ Հ. Ա.-ի հետ եւ, նրանից տեղեկանալով, որ զորամասի համապատասխան գումարտակի հրամանատարը տեղափոխվում է այլ պաշտոնի, առաջարկել է օժանդակել Հ. Ա.-ին՝ հրամանատարի հիշյալ պաշտոնին նշանակվելու համար վերադաս պաշտոնատար անձին կաշառք տալուն: Այնուհետեւ Վ. Ս.-ն այդ մասին հայտնել է Վ. Ա.-ին, ով ընդունել է 906.520 ՀՀ դրամին համարժեք 2000 ԱՄՆ դոլար կաշառքի դիմաց միջնորդել իր վերադասին՝ Հ. Ա.-ին ծառայության մեջ առաջխաղացման կարգով բարձր պաշտոնի նշանակելու:

Արդյունքում՝ Վ. Ա.-ն, կաշառքի դիմաց իր ծառայողական լիազորություններն օգտագործելով Հ. Ա.-ի օգտին, հաստատել է Հ. Ա.-ի ծառայողական բնութագիրը եւ մայիսի 18-ին ներկայացրել է վերջինիս համապատասխան գումարտակի հրամանատարի պաշտոնին նշանակելու միջնորդագիր, որից հետո Հ. Ա.-ն նշանակվել է հիշյալ պաշտոնում:

15.11.2022 թ.-ին Վ. Ա.-ն, Վ. Ս.-ն, Տ. Չ.-ն եւ Հ. Ա.-ն ձերբակալվել են: Նույն օրը Վ. Ա.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով /2 դրվագ/, Վ. Ս.-ին՝ 38-312-րդ հոդվածի 2-րդ մասով /2 դրվագ/, Հ. Ա.-ին եւ Տ. Չ.-ին՝ 312-րդ հոդվածի 2-րդ մասով:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի կողմից միջնորդություն է ներկայացվել Երեւանի ընդհանուր իրավասության դատարան՝ Վ. Ա.-ի եւ Հ. Ա.-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար: Նախաքննությունը շարունակվում է:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ԳՏԵԼ ԵՆ ԹԱՔՍՏՈՑԻՑ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, նոյեմբերի 16-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, զննության են ենթարկել դատապարտյալ Կ.Մ. անվամբ՝ քաղաքացի Հ. Շ.-ի կողմից բերված սառնարանը:

ԱՆ-ից հայտնում են, որ զննությամբ պարզվել է, որ սառնարանի շարժիչի վրա զոդման եղանակով ամրացված է լրացուցիչ մետաղյա կափարիչ: Շարժիչն ամբողջությամբ առանձնացրել են եւ ստուգել անվտանգության ռենտգեն սարքի միջոցով: Արդյունքում՝ սառնարանի շարժիչի լրացուցիչ հատվածում նախապես պատրաստված թաքստոցից հայտնաբերվել է 9 բջջային հեռախոս, 4 բաժանորդային քարտ, 1 լիցքավորիչ, USB 8 լար, 3 ականջակալ եւ բջջային հեռախոսի 2 մարտկոց:

## ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼ Է

Քրեական վարույթ է նախաձեռնվել, որի շրջանակներում ձեռնարկվում են անհրաժեշտ գործողություններ՝ մեքենան վարելու կանոնները խախտելու արդյունքում մեկ զինծառայողի մահվան եւ մի քանի զինծառայողների մարմնական վնասվածքներ պատճառելու դեպքի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Այս մասին հայտնում են ՔԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից՝ մանրամասներ ներկայացնելով:

Այսպես. նախնական տվյալներով, 2022 թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայողը իր կողմից վարած «Կամազ» մակնիշի ավտոմեքենայով, անձնակազմին զորամասից կրակային դիրք տեղափոխելու ճանապարհին խախտել է տրանսպորտային մեքենա վարելու կանոնը, որի արդյունքում մեքենան կողաշրջվել է, ինչի հետեւանքով զինծառայողներից մեկը ստացած մարմնական վնասվածքներից մահացել է, իսկ մյուսները ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել են կայազորային զինվորական հոսպիտալ:

Նախաքննությունը շարունակվում է:

Հիշեցնենք, ըստ ՊՆ հաղորդագրության՝ դեպքը տեղի է ունեցել երեկ՝ ժամը 09:50-ի սահմաններում, «Կամազ» մակնիշի ավտոմեքենայի կողաշրջման հետեւանքով մահացածը զինծառայող Գրիգոր Արթուրի Գրիգորյանն է (ծնված՝ 2000թ.), տուժել է նաեւ 7 զինծառայող:

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

# ՄԻԵԴ-Ի ՆՈՐ ՎՃԻՌԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ

**ՄԻԵԴ-ը նոր վճիռ է կայացրել Հայաստանի դեմ: ArmLur.am-ը տեղեկացավ, որ խոսքը վերաբերում է Չարենցավանի ոստիկանության բաժնում 2010-ին մահացած Վահան Խալաֆյանի գործին:**

ՄԻԵԴ վճռով հաստատվել է, որ Հայաստանի իշխանությունները չեն պաշտպանել ոստիկանության բաժին անօրինական բերման ենթարկված Խալաֆյանին, խախտվել են կյանքի եւ խոշտանգումների արգելքի իրավունքները:

2010 թվականին գողության կասկածանքով 24-ամյա Վահան Խալաֆյանը տարվել էր Չարենցավանի ոստիկանության բաժին, որտեղ չի տվել ինքնախոստովանական ցուցմունք, ինչից հետո նրա նկատմամբ սկսել են բռնություն կիրառել: Պաշտոնական վարկածում առկա տվյալների համաձայն՝ բերման ենթարկվելուց կարճ ժամանակ անց Խալաֆյանը ոստիկանական սենյակի պահարանից վայրկյանների ընթացքում վերցրել է խոհանոցային դանակը, բարձրացրել վերնահագուստը, իջեցրել տաբատը ու 2 անգամ հարվածել է իր որովայնին, ինչից հետո ընկել է հատակին: Տեղում փորձել են ցուցաբերել օգնություն, կանչել են շտապօգնություն, 40 րոպե անց նա հիվանդանոցում մահացել է:

Դատարանը մեղավոր էր ճանաչել 2 ոստիկանի՝ լիազորությունները գերազանցելու հոդվածով, ընդ որում՝ նրանցից մեկը պայմանական է ազատազրկվել: Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել առաջին ատյանի վճիռը, իսկ Վճռաբեկ դատարանը գործը քննության չի ընդունել:

Խալաֆյանի մայրը եւ հարազատները վիճարկել են ինքնասպանության վարկածը, պնդել, որ բազմաթիվ ապացույցներ չեն հետազոտվել:

ՄԻԵԴ-ը կասկածի տակ է դնում նաեւ դատաբժշկական փորձաքննությունների օբյեկտիվությունը, քանի որ փորձագետները ինքնասպանության վարկածը դիտարկել են որպես հաստատված փաստ: ՄԻԵԴ-ը նաեւ նկատել է, որ Խալաֆյանը, փաստորեն, իրականում մոտ ութ ժամ մնացել է ոստիկանական բաժանմունքում նախքան դանակահարությունը, սակայն իշխանությունները այդպես էլ ջանք չեն գործադրել պարզելու, թե նա այնտեղ ինչ վերաբերմունքի է արժանացել եւ իրականում ինչ հանգամանքներում է մահացել:

Կառավարությունը դիմումատուներին համատեղ պետք է տրամադրի 50 հազար եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 16-ից 17-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 55 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՂՈՂՈՎՈՒՐԴ

www.ArmLur.am



ՄԱՐԶ

## ԴԵՌ ՇԱՏ ԳՈՐԾ ԿԱ

Դիլիջան քաղաքում ընթանում են Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի՝ 5կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Վերանորոգվող հատվածը սկիզբ է առնում Դիլիջանի ոլորաններից եւ ձգվում մինչեւ Դիլիջանի օղակաձեւ հատված՝ Մ-4 եւ Մ-8 միջպետական ճանապարհի հատման կետ: Ծրագրով նախատեսված են մայթերի կառուցում, հենապատի նորոգում, ասֆալտբետոնե ծածկի տեղադրում, ճանապարհին առկա կամրջի նորոգում, անվտանգության տարրերով ճանապարհի կահավորում: Պետական բյուջեից այդ նպատակով հատկացվել է մոտ 1 միլիարդ դրամ: Նախատեսված է հիմնանորոգումը ավարտել մինչեւ ընթացիկ տարվա վերջ: Թե ճանապարհաշինական որ ընկերությունն է կատարում այդ աշխատանքները, այդ մասին հիմնանորոգվող հատվածում տեղեկատվական ցուցանակներ տեղադրված չեն: Հաջողվեց պարզել, որ նորոգման աշխատանքներն իրականացնում է «Եվրոասֆալտ» ընկերությունը, որի տնօրենը ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբայր Կառլեն Սիմոնյանն է: Դիլիջանում ընթացող ճանապարհի նորոգման պատճառով ճանապարհաշինարարները պարբերաբար փակում են ճանապարհը, որի հետեւանքով ավտոմեքենաների մեծ կուտակումներ են լինում: Նորոգվող հատվածում ճանապարհային կամրջի նորոգման, ճանապարհաեզրերին եզրաքարերի տեղադրման, ճանապարհի ծածկի ասֆալտապատման աշխատանքները կիսատ են. դեռ շատ գործ կա անելու: Առաջիկայում Դիլիջան քաղաքում սպասվում են ուշ աշնանային անձրեւներ եւ ձյուն, ինչը կխանգարի ընթացող աշխատանքներին: Ուստի, կասկածահարույց է, որ Կառլեն Սիմոնյանի տնօրինած ընկերությունը մինչեւ այս տարվա վերջ կավարտի ճանապարհի նորոգումը, որի համար պետական բյուջեից բավականին ճոխ՝ շուրջ մեկ միլիարդ դրամի ֆինանսավորում է հատկացվել:

## ԳՐԱԴԱՐԱՆԸ ԴԱՏԱՐԿՎԵՑ

«Փոքրիկ ազատ գրադարան» նախագծի հեղինակներն են ամերիկացիներ Թոդ Բոլը եւ Ռիկ Բրուքսը: Ավելի քան 20 երկրներում տեղադրված են տասնյակ հազարավոր փոքրիկ տնակների նմանվող գրադարաններ: Կանադահայ գործարար, Իջեւան քաղաքում վերաբնակեցված Վահրամ Վահրամյանի աջակցությամբ 2016թ.-ին Իջեւանում «Փոքրիկ ազատ գրադարան» նախագծի շրջանակներում տեղադրվեցին փոքրիկ տնակ-գրադարաններ, որոնցից կարող էին օգտվել բոլոր ցանկացողները: Ընթերցողները գիրքը կարդալուց հետո այն վերադարձնում էին գրադարանին: Ամիսը մեկ անգամ թարմացնում էին գրադարանի գրքերը: Ծրագրի նպատակն էր մարդկանց մեջ սեր արթնացնել գրքի հանդեպ: Իջեւան քաղաքի կենտրոնական հատվածում վեց տարի առաջ տեղադրված փոքրիկ գրադարաններն այժմ դատարկ են... Վահրամ Վահրամյանն էլ անցյալ տարի մահացել է:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԸ ԿՆՎԱԶԵՑՎԵՆ

**Կառավարությունն իր՝ նոյեմբերի 17-ի նիստում հավանություն տվեց «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի փոփոխությունների նախագծին եւ այն անհետաձգելի համարեց:**



Նախագծով առաջարկվում է առանձնակի ռիսկային եւ մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնողների, ինչպես նաեւ՝ Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի եւ դատավորի պաշտոններ զբաղեցնող անձանց լրացուցիչ աշխատավարձը՝ հավելումը եւ հավելավճարը, նվազեցնել բազային աշխատավարձի բարձրացման չափով:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսական անկախությունն ապահովելու նպատակով քննիչին վճարվող աշխատավարձի չափը նախատեսվել էր սահմանել 1 միլիոն ՀՀ դրամ, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձինը՝600.000 ՀՀ դրամ, հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի դատավորի համար նախատեսվել էր սահմանել մոտ 1.500.000 ՀՀ դրամ աշխատավարձ:

Օրենքով՝ որպես հավելում վճարելու հիմք սահմանվեց առանձնակի ռիսկայնություն պահանջող պաշտոն զբաղեցնելու հանգամանքը, եւ այդ դեպքում սահմանվեց 100 տոկոսի չափով հավելում:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հիմնական աշխատավարձի հաշվարկման համար սահմանված է 14.50 գործակից, իսկ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի համար՝ 14.00 գործակից: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պարագայում հիմնական աշխատավարձը ներկայում կազմում է 959 030 դրամ (բազային աշխատավարձը՝ 66 140 դրամ), նույն չափով էլ հավելում:

Բացի այդ, հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար նախատեսված է նաեւ հավելավճար, որը կարող է կազմել մինչեւ 30 տոկոս: Այսինքն՝ հիշյալ խմբի անձանց հիմնական աշխատավարձից բացի վճարվում է նաեւ լրացուցիչ աշխատավարձ, որը կարող է լինել պաշտոնային դրույքաչափի մինչեւ 130 տոկոսի չափով:

Կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի նիստում հավանության է արժանացել «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է 2023 թվականի հունվարի 1-ից նվազագույն աշխատավարձը սահմանել 75.000 դրամ:

Նվազագույն աշխատավարձի բարձրացման արդյունքում օրենքով սահմանված կարգով պետք է բարձրանա նաեւ պետական պաշտոն եւ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձը, որը կկազմի 83.200 դրամ:

Բազային աշխատավարձը 83.200 դրամ սահմանելու պարագայում վերը նշված բոլոր պաշտոնյաների աշխատավարձերը նորից կբարձրանան, եւ աշխատավարձերի խզվածքը ավելի կմեծանա:

Նախագծով առաջարկվում է առանձնակի ռիսկային եւ մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնողների, ինչպես նաեւ՝ ՍԴ նախագահի, փոխնախագահի եւ դատավորի պաշտոններ զբաղեցնող անձանց լրացուցիչ աշխատավարձը՝հավելումը եւ հավելավճարը, նվազեցնել բազային աշխատավարձի բարձրացման չափով: Ընդ որում, հավելումների առաջարկվող չափով պահպանվում է ներկայում միջին հաշվով վճարվող աշխատավարձի ընդհանուր չափը՝ պաշտոնային դրույքաչափ, հավելում կամ հավելավճար եւ ամսական պարգեւատրում՝ աշխատավարձի 30 տոկոսի չափով: Հավելումների նվազեցման արդյունքում ամսական աշխատավարձի ընդհանուր չափը որպես կանոն մնում է նույնը:

ՀՅԴ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

# ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ

**Ֆրանսիայի Հայ դատի հանձնախումբը բարձր է գնահատում Ֆրանսիայի Սենատում միաձայն ընդունված բանաձևը, որը խիստ դատապարտում է ադրբեջանական ագրեսիան: Դեմ է քվեարկել միայն ադրբեջանամետ եւ Ալիեւների կլանի մտերիմ Նատալի Գուլեն, որի կոռումպացված լինելն արդեն ակնհայտ է բոլորի համար:**

ՀՅԴ-ից հայտնում են, որ այս բանաձեւը եւս մեկ անգամ ապացուցում է, որ Հայաստանի եւ Արցախի ժողովուրդների անվտանգության եւ իրավունքների հարցի շուրջ կա Ֆրանսիական քաղաքական կոնսենսուս, մասնավորապես՝ օրենսդրական մակարդակում: Եվ մենք առաջիկա օրերին սպասում ենք համանման բանաձեւի ընդունմանը Ֆրանսիայի Ազգային ժողովում:

Այս բանաձեւը Ֆրանսիայի կառավարության համար առավել բարձր ճնշում եւ պարտավորություն կլինի, որպեսզի իր եվրոպացի գործընկերների հետ ի վերջո պատժամիջոցներ ձեռնարկի ադրբեջանական ագրեսորի դեմ: Այս հարցում Ֆրանսիայի հայ համայնքը, Հայ Դատի հանձնախումբը եւ ֆրանսիացի պատգամավորները միայնակ կլինեն, եթե Հայաստանի իշխանությունները ու հայաստանյան դիվանագիտությունը չգործեն նույն ուղղությամբ:

Կա երկրորդ՝ շատ կարեւոր կետ բանաձեւի մեջ: Այն ժամանակ, երբ տարբեր քաղաքական ուժեր փորձում են խեղդել Արցախի ժողովրդի իրավունքների շուրջ քննարկումները եւ նյութը փակ համարել, հատկանշական է, որ Ֆրանսիայի Սենատը վերահաստատում է իր 2020-ի պահանջը Ֆրանսիայի կառավարությանը՝ եւս մեկ անգամ կոչ անելով ճանաչել Արցախի Հանրապետությունը:

Սենատը նաեւ պահանջում է Արցախում ֆրանսիական մարդասիրական կենտրոն հիմնել:

Հայ Դատի հանձնախումբը սատարում է այս առաջարկը եւ վերահաստատում է իր անվերապահ պատրաստակամությունը՝ համագործակցելու Ֆրանսացի քաղաքական դասակարգի հետ՝ ի շահ Հայաստանի եւ Արցախի ժողովրդի անվտանգության, անկախության եւ ազատագրության:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 18 ՃՏՊ. 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ԼՈՒՐԵՐ

### ԾՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶՈՒՄ Է

Հայաստանում 2022 թվականի առաջին 9 ամսում նվազել են ծնելիության եւ մահացության ցուցանիշները: Մեր երկրում սկսել են նաեւ ավելի քիչ ամուսնանալ եւ ավելի շատ ամուսնալուծվել:

Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների համաձայն՝ 2022 թվականի հունվար-սեպտեմբերին Հայաստանում ծնվել է 26.511 երեխա: Այս ցուցանիշը 2021 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է 336-ով (26847 ծնված): 2022 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում երկրում մահացել է 20597 մարդ, ինչը 3077-ով քիչ է 2021 թվականի ցուցանիշից:

Բացի այդ, 2022 թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում կնքվել է 12.305 ամուսնություն, մինչդեռ 2021 թվականի նույն ժամանակահատվածում այս թիվը 12.796 է եղել: Ամուսնացողները քիչ են, փոխարենն ամուսնալուծություններն են շատ. ընթացիկ տարվա առաջին 9 ամսում այդ ցուցանիշը կազմել է 3379, ինչը 82-ով շատ է 2021 թվականի ցուցանիշից:

Նշենք, որ ՄԱԿ-ի կանխատեսման համաձայն՝ Հայաստանում ծնունդների թիվը 2050 թվականին կարող է նվազել՝ հասնելով 24.000-ի: Իսկ երկրի բնակչությունը 30 տարի անց կարող է ընդամենը 2,6 միլիոն լինել:

### «ԵՐԵՎԱՆ ՊԱՐԿԸ» ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է

Կառավարությունն իր՝ նոյեմբերի 17-ի նիստում գերակա ոլորտում ներդրումային ծրագրի շրջանակներում մաքսատուրքից ազատեց Երեւանի Մոնթե Մելքոնյան փողոցի վրա «Երեւան պարկը» կառուցած «ՊԱՐԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

Վերջինս ներմուծվող սարքավորումները նախատեսում է զարգացնել տարածաշրջանում նմանատիպը չունեցող՝ մանկական, երիտասարդական, ընտանեկան հանգստի, ժամանցի եւ զվարճանքների այգին՝ ավելացնելով եվրոպական արտադրողների ատրակցիոններ, մեծ սահադաշտ եւ դեկորացիաներ:

Ծրագիրն իրականացվելու է Երեւան քաղաքում: Ընկերությունը հիմնադրվել է 2017 թվականին:

Արդեն իսկ իրականացվել է 15 մլրդ դրամի ներդրում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 1.8 մլրդ դրամի կապիտալ ներդրում:

Նախատեսվում է ներդրումային ծրագրի շրջանակներում ստեղծել 15 նոր աշխատատեղ՝ մինչեւ 265 հազ դրամ միջին ամսական աշխատավարձով:

Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 1.5 մլրդ դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 131 մլն դրամ:

Հիշեցնենք, որ այս ընկերությունը «Երեւան պարկը» կառուցելիս 2019-ին նույնպես մաքսատուրքից ազատման արտոնություն էր ստացել:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- ք. Երեւան, Կենտրոն, Այգեստան 4-րդ փողոց, 6 հասցեում գտնվող 182,6 ք.մ. բնակելի տուն եւ 0,04195 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 99040000 ՀՀ դրամ:

- Տավուշի մարզ, համայնք Իջեւան ք., Խոջումյան փողոց, 69 հասցեում գտնվող 183,2 ք.մ. բնակելի տուն, 18,7 ք.մ. շվաքարան եւ 0,0536 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 15880000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., Մաշտոցի փողոց, 44/1 հասցեում գտնվող 264,1 ք.մ. բնակելի տուն, 12,2 ք.մ. հավաբուն եւ 0,03 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 25100000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Սարյան փողոց, թիվ 26 հասցեում գտնվող 120.6 ք.մ. բնակելի տուն (արտաքին մակերեսը՝ 159 ք.մ.), 1.9 ք.մ. /4.9 խ.մ./ պարիսպ եւ 0.0507 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 9560000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Այնթապ, 2-րդ շարք, 79 հասցեում գտնվող 181.3 ք.մ. բնակելի տուն, 6.3 ք.մ. լողարան, 1.7 ք.մ. մակերեսով կաթսայատուն եւ 0.0414 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 25790000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Էրեբունի, Վարդաշենի 9-րդ փողոց, 52 հասցեում գտնվող 105,8 ք.մ. բնակելի տուն, 17,8 ք.մ. օժանդակ շինություն եւ 0,065942 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 45220000 ՀՀ դրամ:

- Շիրակի մարզ, համայնք Արթիկ ք., Աղաքարյան փողոց, 4 հասցեում գտնվող 140,1 ք.մ. բնակելի տուն, 35,8 ք.մ. ավտոտնակ եւ 0,0549 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 9540000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Գորիս ք., Անկախության փողոց, 108 հասցեում գտնվող 181.4 ք.մ. բնակելի տուն, 3.3 ք.մ. /11.2 խ.մ./ պարիսպ, 10.5 ք.մ. ինքնակամ կառուցված շինություն եւ 0.1196 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 16530000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Աջափնյակ, Սիլիկյան թաղամաս, 1-ին փողոց, 5/1 հասցեում գտնվող 126,9 ք.մ. բնակելի տուն եւ 0.0539 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 29230000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան ք., Կոմիսարների փողոց, 16 հասցեում գտնվող 77.2 ք.մ. բնակելի տուն, 142.1 ք.մ. ավտոտնակ, 54 ք.մ. անասնաշենք, 19.25 ք.մ. անասնաշենք, 15 ք.մ. ցախանոց եւ 0.1477 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 18980000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան ք., Ռոսիայի փողոց, 4 շենք, 113 հասցեում գտնվող 83,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22970000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Սպիտակ ք., Էստոնական թաղամաս, 4 շենք, 2 հասցեում գտնվող 93,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11200000 ՀՀ դրամ:

- Տավուշի մարզ, համայնք Դիլիջան, քաղաք Դիլիջան, Կամարինի փողոց, 10 հասցեում գտնվող 172 ք.մ. բնակելի տուն, 10,8 ք.մ. մառան, 17,9 ք.մ. ավտոտնակ եւ 0,044 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 27500000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Այնթապ, 8-րդ փողոց, 16 հասցեում գտնվող 266,72 ք.մ. բնակելի տուն, 52,4 ք.մ. թռչնանոց, 316 ք.մ. ջերմոց, 1,3 ք.մ. ցախանոց, 1,7 ք.մ. ծածկ, 24,7 ք.մ. ծածկ եւ 0,08139 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 35100000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Վեդի ք., Արարատյան փողոց, 38 շենք, 4 հասցեում գտնվող 47,36 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 8100000 ՀՀ դրամ:

- ք.Երեւան, Նոր-Նորք, Ն. Մառի փողոց, 11 շենք, 36 հասցեում գտնվող 76,27 ք.մ. բնակարան եւ 8,9 ք.մ. ինքնակամ նկուղ: Լոտի մեկնարկային գինը՝ 24700000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Ձորք թաղամաս, 12 շենք, 17 հասցեում գտնվող 86,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12130000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք., Ե. Չարենցի փողոց, 19 շենք, 38 հասցեում գտնվող 59,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 10600000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան ք., միկրոշրջան թաղամաս, 229 շենք, 6 հասցեում գտնվող 62,31 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 8070000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Ա. Բաբաջանյան փողոց, 149 շենք, 32 հասցեում գտնվող 75,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 24980000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Արաբկիր, Ա. Խաչատրյան փողոց, 9 շենք, 14 հասցեում գտնվող 42,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 27300000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Շենգավիթ, Գ. Նժդեհի փողոց, 7 շենք, 20 հասցեում գտնվող 62,73 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 28670000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Վ. Մամիկոնյան փողոց, 144 (142) հասցեում գտնվող 291 ք.մ. բնակելի տուն (349,1 ք.մ. արտաքին մակերեսով) եւ 0,0628 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 22000000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Շենգավիթ, Արշակունյաց պողոտա, 44/3 շենք, 47 հասցեում գտնվող 88,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 30700000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 05.12.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 26.12.2022թ.-ին, բացառությամբ վերջին լոտի, որի ավարտը՝ 06.01.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

## ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

**Կառավարությունն իր՝ նոյեմբերի 17-ի նիստում գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրերի շրջանակներում միանգամից 3 ընկերությունների ազատեց մաքսատուրքից:**

Նրանցից առաջինը «ԵՎՐՈՊԼԱՍՏ 999» ՍՊԸ-ն է, որը ներմուծվող հումքը նախատեսում է օգտագործել կախովի առաստաղների արտադրության համար: Արտադրությունն իրականացվելու է ՀՀ Երեւան քաղաքում: Ընկերությունը հիմնադրվել է 2018 թվականին: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 2,4 մլրդ դրամի ներդրում հումքի ձեռքբերման համար: Նախատեսվում է ներդրումային ծրագրի շրջանակներում ստեղծել 69 նոր աշխատատեղ՝ մինչեւ 170 հզր դրամ միջին ամսական աշխատավարձով: Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 3.3 մլրդ դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 189 մլն դրամ:

Երկրորդ ընկերությունը «ՅՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՔԼՈՋՐՍ» ՓԲՏ-ն է, որը ներմուծվող հումքը նախատեսում է օգտագործել ալյումինե կափարիչների արտադրության համար: Արտադրությունն իրականացվելու է ՀՀ Կոտայքի մարզում: Ընկերությունը հիմնադրվել է 2017 թվականին: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 2.8 մլրդ դրամի ներդրում հումքի ձեռքբերման համար:

Երրորդ ընկերությունը «ՀՐԱՇՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն է, որը ներմուծվող սարքավորումները եւ հումքը նախատեսում է օգտագործել տարբեր տեսակի կահույքի ինչպես նաեւ՝ ներքնակների արտադրության համար:

Արտադրությունն իրականացվելու է ՀՀ Արարատի մարզում: Ընկերությունը հիմնադրվել է 2018 թվականին:

Արդեն իսկ իրականացվել է 200 մլն դրամի ներդրում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 800 մլն դրամի կապիտալ ներդրում:

Նախատեսվում է ներդրումային ծրագրի շրջանակներում ստեղծել 80 նոր աշխատատեղ՝ մինչեւ 400 հազ դրամ միջին ամսական աշխատավարձով:

Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 790.5 մլն դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 54.6 մլն դրամ:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ԳԵՎՈՐԳ ԱՐՇԱԿՅԱՆ

# ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԵՐՈՍԻՆ

**Նոյեմբերի 16-ին Երեւանի թիվ 22 դպրոցում, որը 44-օրյա պատերազմից հետո անվանակոչվել է պատերազմի հերոս Գեւորգ Արշակյանի անունով, տեղի ունեցավ նրան նվիրված հուշ-երեկույթ:**



Միջոցառմանը հրավիրված էին Գեւորգի ընկերները, ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը եւ այլք:

Ցերեկույթին աշխակերտների շուրթերից հնչեցին ցավի, մորմոքի, հպարտության եւ խիզախության տողեր, որոնք ինքնին բնորոշում են գիտելիքի անհագ դարբնոց Գեւորգ Արշակյանին. նրա համար գլխավոր զենքը գիտելիքն էր, որը սակայն հայրենիքի պաշտպանության գաղափարի առաջ երկրորդական շարք անցավ:

«Հիմք ընդունելով «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը եւ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2021 թվականի հունվարի 20-ի N17-Ն հրամանի հավելվածի 12-րդ կետի 2-րդ եւ 3-րդ ենթակետերը եւ, հաշվի առնելով, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 12.05.2022թ. N/10/20745-2022 գրությունը՝ Երեւան քաղաքի ավագանին որոշում է. «Երեւանի N 22 հիմնական դպրոց» պետական ոչ առեւտրային կազմակերպությունն անվանակոչել Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից Գեւորգ Արշավիրի Արշակյանի անվամբ՝ «Երեւանի Գեւորգ Արշակյանի անվան N22 հիմնական դպրոց» պետական ոչ առեւտրային կազմակերպություն:

Հարցը քննարկվել եւ հավանության է արժանացել դպրոցի մանկավարժական, աշակերտական, ծնողական եւ կառավարման խորհուրդների կողմից:

Գեւորգ Արշակյանը ծնվել է 12.11.1996 թվականին Երեւանում: Դպրոցական տարիներին հայոց պատմություն առարկայից երկու անգամ, եւ ստեղծագործական շարադրություն անվանակարգում մեկ անգամ արժանացել է հանրապետական եւ հասարակական օլիմպիադաների 1-ին կարգի դիպլոմների: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի պետական համալսարան եւ միաժամանակ սովորել երկու ֆակուլտետում՝ փիլիսոփայության եւ հոգեբանության ֆակուլտետում՝ առկա, իսկ իրավագիտության ֆակուլտետում՝ հեռակա ուսուցմամբ: Երկու ֆակուլտետներում ուսումնառությունն ավարտել է գերազանցությամբ: Զուգահեռաբար սովորել է նաեւ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում, որն ավարտելուց հետո ստացել է լեյտենանտի կոչում եւ կամավոր մեկնել ժամկետային ծառայության՝ Արցախ (Մատաղիս): Գեւորգը ԵՊՀ-ում ուսանելու տարիներին ԵՊՀ բրոնզե մեդալակիր է եղել եւ երկու անգամ՝ «Դավիթ Անհաղթի» անվան կրթաթոշակառու: Համալսարանի ուսխորհրդի անդամ էր, գիտակրթական հանձնաժողովի նախագահ, ԵՊՀ գիտխորհրդի եւ գիտական կոչումներ շնորհող հանձնաժողովի անդամ:

Մատաղիսում զինվորական ծառայությունն ավարտել է 2020թ. օգոստոսին, ստացել ավագ լեյտենանտի կոչում եւ զորացրվել: Պատերազմի լուրը ստանալուն պես՝ սեպտեմբերի 28-ին, Գեւորգը ԵՊՀ-ում կազմել է կամավորական ջոկատ եւ մեկնել Մատաղիս, իսկ նահանջից հետո երկու շաբաթ գտնվել է Ալաշանում. թոքաբորբով հիվանդանալուց հետո տեղափոխվել է Երեւան եւ բուժվելուց հետո՝ նորից վերադարձել Ալաշան:

Նոյեմբերի 5-ին, որպես վաշտի հրամանատարի տեղակալ, մասնակցել է Շուշիի պաշտպանական մարտերին, ստացել է երկու հրազենային վիրավորում, շարունակել է մարտը մինչեւ գիտակցության կորուստը: Նրան տեղափոխել են հիվանդանոց, որտեղ էլ հերոսը մահացել է: Գեւորգ Արշակյանը հայրենիքի պաշտպանության եւ պետության անվտանգության ապահովման գործում նշանակալի ավանդ է ներդրել, որի համար Արցախի Հանրապետության նախագահի՝ 2021թ. փետրվարի 17-ի հրամանագրով պարգեւատրվել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով, ՀՀ նախագահի 2021թ. մայիսի 12-ի հրամանագրով՝ «Մարտական ծառայություն» մեդալով:

«Երեւանի N22 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ն Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից Գեւորգ Արշավիրի Արշակյանի անվամբ անվանակոչելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է դպրոցի տնօրինության կողմից:

*ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

# ՀԱՅԿՈՅԻ ՀԱՄԵՐԳԸ՝ ԱՄՆ-ՈՒՄ

**Երեկ ԱՄՆ-ի հայաշատ Լոս Անջելեսի «Ալեքս» թատրոնում կայացավ ՀՀ վաստակավոր արտիստ, սիրո հավերժ երգիչ Հայկոյի հիշատակին նվիրված մեծ համերգ, որին ներկա էին երգչի հարազատ ընկերներն ու մտերիմները:**

Ի դեպ, նշենք, որ համերգը կրում է «Սերը սիրուց հետո՝ կարոտով…» խորագիրը:

Հիշեցնենք, որ 2021 թվականի սեպտեմբերի 21-ին կորոնավիրուսի համավարի պատճառով մահացավ երգիչ, երգահան Հայկոն. նա 48 տարեկան էր:

Սեպտեմբերի 29-ին երգիչը ծանր վիճակում տեղափոխվել էր «Միքայելյան» համալսարանական հիվանդանոց:

Հայկոն 1987 թվականին ավարտել է Երեւանի՝ Չուխաջյանի անվան երաժշտական դպրոցը եւ ընդունվել Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան: 1999 թվականին ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան:

1998, 1999, 2002, 2003 եւ 2006 թվականներին հայկական երաժշտական ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ Հայկոն արժանացել է «Տարվա լավագույն երգիչ» մրցանակին:

2006 թվականին ՀՀ Նախագահի հրամանագրով նրան շնորհվել է Հայաստանի վաստակավոր արտիստի կոչում:

2007 թվականին ներկայացրել է Հայաստանը «Եվրատեսիլ» երգի միջազգային մրցույթի ժամանակ եւ զբաղեցրել 8-րդ տեղը: 2007, 2010 եւ 2011թթ. արժանացել է «Տարվա լավագույն կոմպոզիտոր» մրցանակին՝ «Մի վախեցիր», «Սպանված աղավնի», «Խաչագողի հիշատակարանը» ֆիլմերի երաժշտության համար: Գրել է նաեւ «Ոչինչ չի մնա», «Գարեգին Նժդեհ» ֆիլմերի սաունդթրեքները:

*Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ԳԵՂԱՍԱՀՈՐԴ Է ՄԱՀԱՑԵԼ

76 տարեկանում մահացել է լեգենդար խորհրդային գեղասահորդ Ալեքսանդր Գորշկովը, որը 2010 թվականից Ռուսաստանի գեղասահքի ֆեդերացիայի նախագահն էր:

Ալեքսանդր Գորշկովը Լյուդմիլա Պախոմովայի հետ 1976թ. Ինսբրուկի Օլիմպիական խաղերի չեմպիոնն է պարային զույգերի պայքարում:

Նրանք նաեւ 6 անգամ նվաճել են աշխարհի չեմպիոնի եւ 6 անգամ՝ Եվրոպայի չեմպիոնի տիտղոսները: Նրանք կարիերան ավարտել էին 1977 թվականին:

## ՌՈՒՍԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանում հայատյացության քարոզչությանը գումարվել է ռուսատյացության քարոզչությունը: Վառ օրինակ է դարձել Ադրբեջանում հայտնի երգիչ Ազիզ Ալիեւի հոլովակը՝ ռուս խաղաղապահների մասին:

Ադրբեջանական «պլագիատի» վատ ավանդույթներին համապատասխան՝ երաժշտամերձ արվեստի սույն ներկայացուցիչը ռուսատյացության քարոզչության համար օգտագործել է «Սմուգլյանկա»-ի մեղեդին: Արդյունքը, մեղմ ասած, զզվանք է առաջացնում:

Եվ այսպես, «Խաղաղապահներ» համույթ: Կատարողներ՝ Ազիզ Ալիեւ եւ Լյուբա:

Ներկայացնում ենք «երգի» թարգմանությունը. չնայած՝ ադրբեջաներեն չգիտենք, բայց «տուրիստ», «դուշման», «վիզա» բառերը բացատրում են՝ ինչն ինչոց է:

«Արդեն երկու տարի Ղարաբաղում տուրիստներ են տեղակայված:

Իրենց պահվածքով նրանք մեր զզվանքն են առաջացնում:

Մեզ հյուր են եկել, տեղավորվել միջանցքում, որով զենք են փոխադրում մեր թշնամիների համար:

Քանդում են լքված տների տանիքները:

Հանդիպում են անջատողականների հետ եւ հայերի հետ ձեռք ձեռքի տված՝ տարբեր խաղեր են խաղում:

Նրանք շատ բեռներ են բերում Ղարաբաղ,

եւ այնտեղ են ուղարկել Վարդանյանին՝ ավազակներից մեկին:

Շուտով կավարտվեն տուրիստների վիզաները:

Եվ Վարդանյանը կվերադառնա իր տուն,

իսկ եթե նրանք ցանկանան նորից գալ Ղարաբաղ, պետք է տոմս գնեն տուրիստական գործակալությունում:

Քանդում են լքված տների տանիքները:

Հանդիպում են անջատողականների հետ:

Ժամանակն է, որ խաղաղապահները վերադառնան իրենց տուն:

Իսկ Փաշինը ժամանակ է ձգում:

Բայց Փաշինը ոչինչ չի վճռում,

եւ ասում է, որ այս հողերն ադրբեջանական են»:

● *Նոյոմբերի 18-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա ներկայացում՝ «Գծավորը»: Տոմսերի արժեքը՝ 1000-2000 դրամ: Սկիզբը՝ 12:00:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈՁԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Երեխայի որդեգրման գործընթացը արդյոք գաղտնի է մնում:**

*Սեդրակ Յենոքյան (44 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Երեխայի որդեգրման գաղտնիքը պահպանվում է օրենքով:

Երեխայի որդեգրման մասին վճիռ կայացրած դատավորները կամ որդեգրման պետական գրանցում իրականացնող քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնի ղեկավարը եւ աշխատողները, ինչպես նաեւ՝ որդեգրման մասին տեղյակ այլ անձինք պարտավոր են պահպանել երեխայի որդեգրման գաղտնիքը: Նշված անձինք, որոնք հրապարակում են երեխայի որդեգրման գաղտնիքը նրա որդեգրողների կամքին հակառակ, պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

*ՀՀ աշխատանքի*
*եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ»** 18 տարին լրացած անձն իրավունք ունի իր որդեգրման փաստի, ծննդավայրի եւ ժամանակի, ինչպես նաեւ՝ կենսաբանական ծնողի անձնական տվյալների, այդ թվում՝ ազգության, արյան խմբի, հիվանդությունների վերաբերյալ տեղեկություններ ստանալու, իսկ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները այդպիսի տեղեկություններ կարող են տրամադրել միայն կենսաբանական ծնողի կողմից նախապես տրված գրավոր համաձայնության դեպքում: Նման համաձայնության բացակայության դեպքում տեղեկատվությունը կարող է տրամադրվել չանձնավորված:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Երբ է արգելվում ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումը:**

*Արման Արզումանյան (34 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ազգային անվտանգության ապահովման, մարդկանց կյանքի եւ առողջության, պատմամշակութային արժեքների կամ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից, եթե հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան՝

-գերեզմաններ

-բնության, պատմության եւ մշակույթի հուշարձաններ

-Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաեւ եթե տվյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ:

Ընդերքօգտագործումը բնության հատուկ պահպանվող տարածքներում կարող է իրականացվել միայն Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի օրենսդրությամբ սահմանված կարգով:

*ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Հայաստանի Հանրապետությունում արգելվում է սնդիկի՝ որպես օգտակար հանածոյի ուսումնասիրությունը եւ արդյունահանումը, բացառությամբ այն դեպքերի, երբ սնդիկը հիմնական արդյունահանվող օգտակար հանածո չէ:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*



2016 թվականի ապրիլի Քառօրյա պատերազմում զոհված Քյարամ Սլոյանին եւ Անդրանիկ Զոհրաբյանին հետմահու շնորհվեց «Արցախի հերոս» բարձրագույն կոչում:

Երեւանում Արցախի ներկայացուցչությունում «Ոսկե Արծիվ» շքանշանները հերոսների ծնողներին հանձնեց Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը:


## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:




Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:



*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

### ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ______________
Ազգանուն՝ ______________
Առաքման հասցե՝ ______________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*



Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.11.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: